ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

21.03.2018Թ. ԿՆՔՎԱԾ N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/13» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼՈԿԱԼ ՑԱՆՑԻ ԵՎ ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան 1 օգոստոս 2018թ

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Պատվիրատու>>, մի կողմից, և «Երևան Տելեկոմ Սոլուշնս» ՓԲԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Կարայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 21.03.2018թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/13» գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը **որոշեցին**

1.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծառայությունների տեխնիկական բնութագրի 5-րդ կետի <և երրորդ> բառերը հանել:

2. Այլ պայմաններ

2.1. 21.03.2018թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով համակարգչային լոկալ ցանցի և տեսահսկման համակարգի կառուցման ծառայությունների ձեռքբերման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Երևան Տելեկոմ Սոլուշնս» ՓԲԸ
ք. Երևան, Մ. Ավետիսյան 1	ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1, 303 գրասենյակ
ՀՎՀՀ՝ 02629081	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900000903808	Հ/Հ 1570004845580100
ՀՀ ՖՆ աշխատակազմի	ՀՎՀՀ 00930215
գործառնական վարչություն	Տնօրեն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավարի	
ժամանակավոր պաշտոնակատար	
Վ. Հարությունյան	Ա. Կարայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.